



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10997

547

16-76

10996

1881

30X33

547
A-76
u.u.

ԼԵՎՈՆ ՌՈՏԻՆՑԱՆ

**ԿԱԽՈՒՄՆԵՐ ԲԻՆԱՐ ՄԻԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԲԱՐԵ-
ԽԱՌՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԻԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ
ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**

Հայտնի չէ, վոր բավարար չափով տաքացրած ամեն մի համասեռ նյութ անցնում է շոգենման (գազանման) վիճակի և վոր, ընդհակառակն, ամեն մի գազ (գոլորշի) կարելի չէ հեղուկացնել: Համասեռ նյութի հեղուկ և գազանման վիճակների միջև յեղած առընչությունները հետազոտելիս դանձիվ է, վոր ծավալի, ճնշման և բարեխառնության փոփոխական մեծությունների վորոշ արժեքների գեղբում նյութի այնպիսի վիճակ և առաջանում, յերբ հեղուկի և գազի միջև ամեն մի տարբերություն չքանում և և հետևապես հեղուկի և գազի բոլոր հատկությունները նույնանում են: Այդ վիճակը կոչվում է կրիտիկական, իսկ փոփոխական ծավալի, ճնշման և բարեխառնության համապատասխան արժեքները կոչվում են կրիտիկական մեծություններ: Այս յերեք կրիտիկական մեծություններից բավարար չափով ուսումնասիրված է միայն կրիտիկական բարեխառնությունը, ուստի և ստիպված ենք հետազոտությունը սահմանափակել բինար միացությունների կրիտիկական բարեխառնության բաղադրությունից ունեցած կախումներով:

Բաղադրությունից կախված լինելուց զատ մարմնի ֆիզիկական հատկությունները կախված են նաև արտաքին պայմաններից. ծավալի, ճնշման և բարեխառնության փոփոխությունն առաջ և բերում ֆիզիկական հատկությունների փոփոխություն, ուստի անհրաժեշտ է նախապես փորոշել տվյալ հատկությունների և արտաքին պայմանների միջև յեղած կախումները:

Այդպիսի նախնական աշխատանք ամուրֆ, այսինքն հեղուկ և գազանման վիճակի համար կատարել է Van der Waals-ը, այսպես կոչված վիճակի հավասարումով: Van der Waals-ն*), իր վիճակի հավասարման միջոցով,

*) Continuität des gasförmigen und flüssigen Zustands. 1881.

083



5496-2010

վոր արտաձված և կիրառելիական ըմբռնումները հիման վրա, ընդգրկեց հե-
ղուկ և գազանման վիճակի ամբողջությունը: Van der Waals-ի վիճակի հա-
վասարումը յերեռեյթի վորակական կազմը ապլիս և զարմանալիորեն լրիվ,
իսկ ինչ վերաբերում և քանակականին, ապա այստեղ նկատելի չե, վոր
հավասարումից հաշված մեծությունները և վորձուվ գտածներն իրարից
սխտեմասիկորեն զանազանվում են: Բավականաչափ վորձերից հետո սկսեց
հարզվել, վոր վիճակի հավասարումն այնքան ավելի լավ և ընդգրկում
համասեռ նյութը, վորքան ավելի պարզ և նրա մոլեկուլական կառուցվածքը:

Այնուհետև Van der Waals-ը ծավալի, ճնշման և բարեխառնություն
չափման միությունները ձևավորելու միջոցով իր հավասարումից ստացավ
վիճակի այսպես կոչված վերածյալ հավասարումը, վորից անմիջորեն բղ-
խում և համապատասխան վիճակների սկզբունքը: Այս սկզբունքի համա-
ձայն ամեն տեսակ մարմինների հատկություններն այն ժամանակ են հա-
մապատասխան վիճակներում գտնվում, յերբ ծավալի, ճնշման և բարեխառ-
նություն մեծությունները կազմում են կրիտիկական ծավալի, կրիտիկա-
կան ճնշման և կրիտիկական բարեխառնություն հավասար մասերը: Վորով-
հետև համապատասխան վիճակների սկզբունքը վիճակի հավասարման ան-
միջական հետևանքն է, ապա նրա կիրառելիությունն ամեն տեսակ մար-
մինների վրա՝ քանակական տեսակետից լիովին համընկնում և հավասար-
ման կիրառելիություն հետ:

Համապատասխան վիճակների սկզբունքի տեսակետից կրիտիկական
բարեխառնությունը համապատասխան բարեխառնություն է, վորովհետև

ամեն մի նյութի համար նա մեկը $\frac{T_k}{T_k} = 1$:

Անցնելով այժմ բինար միացությունների կրիտիկական բարեխառ-
նության՝ միացությունը կազմող ելեմենտների կրիտիկական բարեխառ-
նությունից ունեցած կախման քննություն, պետք է ասել, վոր այդ հատ-
կություն մեջ չի կարելի ճշգրիտ ազդեցիկ կախումներ սպասել, այսինքն
այնպիսի կախումներ, վորոնց թվական մեծությունը միացություն մեջ ար-
տահայտվում և բազաղրիչ մասերի թվական մեծությունների գումարով:
Ճշգրիտ ազդեցիկ կախումներ պետք է սպասել միայն կամ շրջապատ վի-
ճավայրից կախում չունեցող հատկություններից, ինչպիսին է, որինակ՝
մասսան, կամ այն պայմաններում, յերբ միջավայրի ազդեցությունը հնա-
րավոր չի, ինչպես որինակ՝ նյութի ծայրահեղ ցրման դեպքում:

Մասան իրոք ճշգրիտ ազդեցիկ հատկություն ունի, վորովհետև բո-
լոր քիմիական պրոցեսների ժամանակ միանգամայն անփոփոխ և ֆուսմ:
Մի շարք հատկություններ, ինչպես որ,՝ մոլեկուլական ջերմունակությունը,
մոլեկուլական ծավալները, լույսի մոլեկուլական բեկումը և այլն ընդհանուր
գծերով ազդեցիկ բնույթ ունեն: Այնուհետև ազդեցիկ հատկություններն
անցնում են կոնստիտուտիվ հատկությունների, վորոնք կախված են վոչ
միայն բազաղրիչ ելեմենտների հատկություններից, այլ և նրանց քիմիա-
կան վիճակից:

Մտավորապես ազդեցիկ հատկությունները կրում են կոնստիտուտիվ
բնույթի ավելի կամ սրակաս ուժեղ գոնափորում և իրարից ետպես տար-
բերվում են այդ գոնափորման առավել կամ նվազ ինտենսիվությունը:

Կրիտիկական բարեխառնություն՝ նյութի հիմնական կոնստանտներից
մեկի հատկությունների հետազոտությունն այս տեսակետից հետաքր-
քություն է ներկայացնում, վորովհետև a priori չի կարելի նախատեսել,
թե նրա մեջ վոր չափով և արտահայտվում ազդեցիկությունը և վոր չա-
փով պետք է յերեռան գոն կոնստիտուտիվ ազդեցությունները:

Այնպիսի բինար միացություններ կազմող ելեմենտների թիվը, վորոնց
կրիտիկական բարեխառնությունները հայտնի չեն, մեծ չի. նրանք բեր-
ված են ստորև դետեղված № 1 աղյուսակում, վորը կազմված է ըստ Lan-
dolt-ի *), բացի սնդիկին և անտիմոնին վերաբերող վերջին յերեռու տվյալ-
ներից: Սնդիկի կրիտիկական բարեխառնություն համար տվյալը վերցրած
է Լ. Ռոտինյանի և Վ. Սուխոզկու «06 упргоетн паров ртути и ея кри-
тической температуре» **) աշխատությունից, իսկ անտիմոնի կրիտիկական
բարեխառնությունը հաշվել ենք մենք Guldberg-ի կանոնի միջոցով անտի-
մոնի յեռման բարեխառնությունից, վոր վորոշել են Ruff u. Bergdahl-ը, այլև
Greenwood-ը ***), և հավասար է 1440° C 760 mm ճնշման դեպքում:

		Tk	Հետազոտող	
Ջրածին	H ₂	33,1	Kam. Omnes, Crommelin, Cath.	1917
Ազոտ	N ₂	125,9	Mathias, Kam. Omnes, Crommelin	1914
Թթվածին	O ₂	154,2	Olszewski	1885
Քլոր	Cl ₂	417,0	Pellaton	1915
Բրոմ	Br ₂	575,2	Nadejdin	1887
Յոդ	Y	826	Rassow	1900
Փոսֆոր	P	1221	Van Laar	1917
Ծծումբ	S	1313	Rassow	1920
Մոլիբդ	Hq	17,0	Rotinjanz u. Suchodski	1915
Անտիմոն	Sb	2600		

Ոգավելով № 1 աղյուսակի տվյալներից՝ կարելի չե խառնուրդի կանո-
նով հաշվել այդ ելեմենտների բինար միացությունների կրիտիկական բա-
րեխառնությունները: Յեթև T^k նշանակենք մի ելեմենտի կրիտիկական
բարեխառնությունը, իսկ T^k մյուսինը, n և (100 - n) լինին առաջին և յեր-
կրորդ ելեմենտի մոլեկուլական տոկոսները, ապա այդ ելեմենտներից բազ-
կացած միացության T_{km} կրիտիկական բարեխառնությունը կլինի:

$T_{km} = \frac{nT^k + (100 - n) T^k}{100}$

№ 2 աղյուսակի 4-րդ սյունակում առաջ են բերած բինար միացու-
թյունների կրիտիկական բարեխառնությունները՝ հաշված ըստ վերին բա-
նաձևի, 3-րդ սյունակում նույն միացությունների կրիտիկական բարե-

*) Physik. chem. Tabellen. 1923 p. p. 253 - 263.
**) Извест. СІВ. Политехнич. Института т. 23. 1915
***) Landolt. Tabellen p. 1338

խառնուրթյուններն ըստ փորձերի արդյունքի և, վերջապես, 5-րդ սյունակում փորձի միջոցով ստացած և հաշվով գտած մեծությունների տարբերությունը:

№ 2 աղյուսակի փորձնական տվյալներն ամբողջովին վերցրած են Landolt-ից *)

Գլուխ ջրածին	HCl	Tk	ԿԱՊԻՍԵԼ. Tk հաշվով.	Δ/Δ	1912	1913	1914
Գլուխ ջրածին	HCl	324,4	225	+100	Cardoso u. Germann	1912	
Բրոմ ջրածին	HBr	364,07	304	+60	Eirstreicher u. Schmeir	1913	
Ցուլ ջրածին	HJ	423,8	428	-5	"	"	"
Մնդկական քլորիդ	HgCl ₂	976	868	+108	Rotinjanz u. Suchodski	1914	
" քլորիդ	HgBr ₂	1011	973	+38	"	"	"
" յոդիդ	HgJ ₂	1072	1140	-68	"	"	"
Ֆոսֆոր ջրածին	PH ₃	325,8	330	-5	Leduc u. Sacerdote	1897	
Ֆոսֆոր արբիլիդ	PCL ₃	558,5	617	-58	Pawlewski	1883	
Ֆոսֆոր արբիլիդ	PBr ₃	714	737	-23	Guldberg	1882	
Ֆոսֆոր պենտաքլորիդ	PCL ₅	645	551	+94	Prideaux	1911	
Անտիմոն արբիլիդ	SbCl ₃	797	962	-165	Rotinjanz u. Suchodski	1914	
Անտիմոն արբիլիդ	SbBr ₃	904,5	1082	-177	"	"	"
Անտիմոն արբիլիդ	SbJ ₃	1101	1268	-167	"	"	"
Ծծմբաջրածին	SH ₂	373,4	460	-87	Cardoso u. Armi	1912	
Ծծումբ գիտքսիդ	SO ₂	430,15	540	-110	" u. Bell	"	"
Ծծումբ արբիլիդ	SO ₃	489	444	+45	Schenck	1901	
Ազոտ օքսիդ	NO	177	140	+37	Olzewski	1908	
Ազոտ սուլֆուրիդ	N ₂ O	311,8	135	+177	Villard	1894	
Ազոտ գիտքսիդ	NO ₂	431,2	144	+287	Scheffer u. Treub	1912	
Ամոնիակ	NH ₃	403	56	+347	Dewar	1884	
Ջուր	H ₂ O	647	73	+574	Holborn u. Baumann	1910	

*) Tabellen p. 253—263

№ 2 աղյուսակի 5-րդ սյունակում դիտարկված խառնուրդի կանոնով հաշված և փորձով գտած մեծությունների տարբերությունները՝ առհասարակ ենք, վեր 21 նյութերից հնգի համար, վորոնք են՝ HJ, HgBr₂, HgI₂, PH₃ և PBr₃, կրիսիկական բարեխառնուրթյունները հեռու են աղբյուրի վրայի կանոնին բավարար մոտավորությամբ, վորովհետև գիտելի շեղումները, վորոնք հասնում են 50%-ի, փորձի սխալների սահմաններում են մնում: Այդ միացությունները կազմող երկմենաների կրիսիկական բարեխառնուրթյունների տարբերությունը մեծ է, հասնում է 12000-ի *):

Մնացած 16 նյութերից չորսը՝ N₂O, NO₂, NH₃ և H₂O ամենևին հեն հեռու աղբյուրի վրայի կանոնին. այսպես որինակ ջրի կրիսիկական բարեխառնուրթյունը, վոր հավասար է 6470-ի, 9 անգամ գերազանցում է հաշվով գտած կրիսիկական բարեխառնուրթյունը, վոր հավասար է 730-ի: Այսպիսով ջուրը, վոր ապականոն է գրեթե իր բոլոր հատկություններով, ապականոն է նաև կրիսիկական բարեխառնուրթյունի առաջինը: Բնորոշ է, վոր այս 4 միացություններն այնպիսի երկմենաներով են կազմված, վորոնց կրիսիկական բարեխառնուրթյունները շատ ցած են և, բացի դրանից, իրար բավական մոտ են: Այս աղյուսակի մնացած 12 նյութերը առավել կամ նվազ հափով շեղվում են աղբյուրի վրայից, և գեպքերը, յերբ փորձնական մեծությունները բարձր են (+) կամ ցած (-) հաշվով ստացանքից, հավասարապես են բաշխված:

Pawlewski, Galizine, Kuenen, Ramsay, Schmidt, Caubet և մի շարք այլ գիտնականներ հետազոտել են այնպիսի բինար խառնուրդների կրիսիկական բարեխառնուրթյունները, վորոնք կազմված են զանազան, գլխավորապես որգանական, միացություններից. այդ տվյալների ամբողջությունը կա Landolt-ի մեջ *):

Աղյուսակներում առաջ բերած 47 խառնուրդներից 16-ն աղբյուրի վրայի կանոնում են, ինչպես որինակ՝ ացետոն+քլորոֆորմ, եթիլեթեր+բենզոլ, եթիլեթեր+պրոպիլոնաթթու, 14 խառնուրդների կրիսիկական բարեխառնուրթյունը բարձր է, քան այդ համապատասխանում է խառնուրդի կանոնին, որինակ՝ եթիլալկոհոլ+բենզոլ, գլիցերոլ+պենտան, ածխածին+ծծումբ-գիտքսիդ, վերջապես 17 խառնուրդների կրիսիկական բարեխառնուրթյունն ավելի ցած է, քան այդ համապատասխանում է խառնուրդի կանոնին, որինակ՝ եթիլեթեր+եթիլալկոհոլ, եթիլեթեր+ածխածին, քլոր-ջրածին+ածխածին:

Բազմաանոթով մի կողմից վորպես երկմենաների խառնուրդ գիտվող բինար միացությունների կրիսիկական բարեխառնուրթյունները և մյուս կողմից արիկ խառնուրդների կրիսիկական բարեխառնուրթյունները՝ նկատում ենք նրանց լիակատար նմանությունը: Միացությունների մեջ էս, ինչպես խառնուրդների մեջ, կան թե աղբյուրի վրայից գեպքեր և թե աղբյուրի վրայից գեպքեր այս և գեպք այն կողմ շեղումներ, և այս շեղումները գրեթե միևնույն կարգի յին: Այս նմանությունը հանդես է գալիս հակա-

*) Tabellen p. p. 263—264.

ուակ այն բանի, վոր ելիմենտների հատկությունները, յերը նրանցից քիմիական միացություններ են կազմվում, խոր փոփոխություններ են կրում, մինչդեռ խառնուրդի բաղադրիչները խառնվելով գրեթե չեն փոփոխվում: Այսպիսով տեսնում ենք, վոր յերևույթների այս բնագավառում քիմիական միացություն և խառնուրդի տարրերությունը վորոշակի յերևան չի գալիս:

Зависимости между критической температурой бинарных соединений и критической температурой образующих соединение элементов.

В таблице № 2 в столбце 4 приведены критические температуры бинарных соединений, вычисленные по правилу смешения, в столбце 3—критические температуры тех-же соединений по опытным данным и, наконец, в столбце 5—разницы между опытными и вычисленными величинами. Рассматривая в столбце 5 эти разницы, мы видим, что критические температуры для пяти веществ из 21, именно HJ , HgBr_2 , HgJ_2 , PH_3 , PBr_3 следуют правилу аддитивности с достаточным приближением, так как отклонения, достигающие 5⁰/₆, лежат в пределах ошибок опыта. Разница в критических температурах элементов, образующих эти соединения, большая, достигающая 1200°.

Из остальных 16 веществ четыре: N_2O , NO_2 , NH_3 и H_2O совершенно не следуют правилу аддитивности. Характерно, что эти 4 соединения образованы элементами, критические температуры которых очень низки и кроме того, довольно близки друг к другу.

Остальные 12 соединений этой таблицы в большей или меньшей степени отклоняются от аддитивности, при чем случаи, когда опытные величины выше (+) или ниже (—) вычисленных, равно распределены.

Pawlewski, Голицын и ряд других ученых исследовали критические температуры бинарных смесей, составленных главным образом из органических соединений. Из 47 исследованных смесей 16 обладают свойством аддитивности, у 14 смесей критическая температура выше, чем соответствует правилу смешения, а у 17 ниже. Сопоставляя с одной стороны критические температуры бинарных соединений, рассматриваемых как смесь элементов, а с другой стороны критические температуры типичных смесей, бросается в глаза полная аналогия.

Из этой аналогии вытекает, что в этой области явлений разница между химическим соединением и смесью не проявляется резко.

547
Ռ-76

« Ազգային գրադարան



NL0269242

